ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2016 թվականի N 38 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1510-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) 57.1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Պարգևատրման չափը որոշելու համար համապատասխան մարմինը հիմք է ընդունում աշխատողի այդ մարմնում գնահատված կատարողականի արդյունքը (կատարողականի գնահատականը) և տվյալ ժամանակաշրջանի հիմնական աշխատավարձի չափը: Ընդ որում, նույն կարգով է հաշվարկվում նաև այն աշխատողների պարգևատրման չափը, որոնց

պաշտոնի փոփոխությունը կատարվել է պետական իշխանության մարմնի աշխատակազմում:».

2) 58-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«58. Պարգևատրման չափը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Քայլ առաջին՝ հաշվարկվում է պարգևատրման գործակիցը հետևյալ բանաձևով.

$$\text{Գ} = \frac{\text{ԿՊՖ}}{\left((\text{Ա}_1 * \text{ԿԿԳ\%}) + (\text{Ա}_2 * \text{ԿԿԳ\%}) + (\text{Ա}_3 * \text{ԿԿԳ\%}) \ldots\ldots + (\text{Աn} * \text{ԿԿԳ\%}) \right)}$$

որտեղ՝ ԿՊՖ-ն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ մարմնի համար նախատեսված կիսամյակային պարգևատրման ֆոնդն է, Ա_1, Ա_2 ... Աn –ը՝ տվյալ աշխատողի պաշտոնային դրույքաչափը, ԿԿԳ-ն՝ տվյալ աշխատողի կատարողականի կիսամյակի գնահատականը, իսկ Գ-ն՝ պարգևատրման գործակիցը:

Քայլ երկրորդ՝ պարգևատրման գործակիցն արտահայտվում է տոկոսով (Գ*100= Գ%):

Քայլ երրորդ՝ հաշվարկվում է յուրաքանչյուր աշխատողի պարգևատրման չափը հետևյալ բանաձևով.

ՊՉ = $(\text{Ա}_1 * \text{ԿԿԳ\%}) * \text{Գ\%}$»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. հունվարի 29
Երևան